

**Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի»
համար \$S 2018**

**«Ղուկասավան գյուղում SS մասնագիտական կենտրոնի ստեղծման
ծրագրի» ավարտի արարողությունը**

2021 թվականի սեպտեմբերի 16-ին Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության շրջանակում Ղուկասավան գյուղում տեղի ունեցավ «Ղուկասավան գյուղում SS մասնագիտական կենտրոնի ստեղծման ծրագրի» 88.078 ԱՄՆ դոլար արժողությամբ դրամաշնորհային ծրագրի ավարտի արարողությունը: Արարողությանը ներկա էին ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Մասանորի Ֆուկուշիման, Արարտի մարզպետի տեղակալ Գևորգ Սիմոնյանը, Ղուկասավան գյուղի գյուղապետ Արա Վարդանյանը, «Առաջնորդության Դպրոց»-ի հիմնադիր Սամվել Մովսիսյանը, Ղուկասավանի միջնակարգ դպրոցի տնօրեն Ռուզաննա Ահարոնյանը, Ղուկասավան գյուղի SS մասնագիտական կենտրոնի պատասխանատու ներկայացուցիչ Ռուզան Խաչատրյանը, հարակից համայնքների միջնակարգ դպրոցների տնօրենները, SS կենտրոնի ապագա աշակերտները և այլք:

Ղուկասավան գյուղում SS մասնագիտական կենտրոնի ստեղծումը նպատակ ունի մասնագիտական ուսուցում տրամադրել Ղուկասավան գյուղի, ինչպես նաև նրա հարակից համայնքների երիտասարդներին, որտեղ շուրջ 3000 երիտասարդներ ապրում են աղքատության և գործազրկության բարձր մակարդակի պայմաններում: Ճապոնական կառավարությունը օժանդակել է շենքի կառուցմանը և շենքը լիովին վերազինել SS սարքավորումներով, մասնավորապես՝ համակարգիչներով և պրոյեկտորներով: Նախագիծը համագործակցում է «Առաջնորդության Դպրոց Հայաստան»-ի հետ, որը մշակել է հայեցակարգը և կենտրոնին տրամադրել կրթական ծրագիր:

Արարողության ընթացքում աշակերտները դեսպան Ֆուկուշիմային դիմավորեցին ավանդական ընդունելությամբ՝ աղ ու հացով: Պարոն Վարդանյանը իր բացման խոսքում ողջունեց հյուրերին՝ ներկայացնելով ծրագիրը և երախտագիտություն հայտնելով Ճապոնական կառավարությանը և Ճապոնիայի դեսպանությանը աջակցության համար: Ելույթ ունեցավ նաև պարոն Սիմոնյանը, ով հույս հայտնեց, որ նմանատիպ SS կենտրոններ կստեղծվեն նաև համայնքի այլ գյուղերում:

Դեսպան Ֆուկուշիման ելույթ ունեցավ հայերեն՝ նշելով, որ Հայաստանը հարուստ է մարդկային ռեսուրսներով, և այսօրվա աշակերտները հնարավորություն կունենան որակյալ կրթություն ստանալ և դառնալ SS ոլորտի փայլուն մասնագետներ:

Ելույթներին հաջորդեց քանոն երաժշտական գործիքով կատարումը, որից հետո ելույթ ունեցան տիկին Ահարոնյանը և տիկին Խաչատրյանը՝ նշելով, որ սա պատմական օր է իրենց համայնքի համար և հսկայական հնարավորություն երիտասարդության ապագայի համար: Այս նախագիծը կնպաստի Արարատի մարզում SS ոլորտի ներդրմանն ու զարգացմանը:

Պարոն Մովսիսյանը հանդես եկավ շնորհակալական խոսքով՝ շնորհակալություն հայտնելով ծրագրի իրականացման մեջ ներգրավված բոլոր կողմերին: Նա նաև որոշ մանրամասներ ներկայացրեց SS կենտրոնի ուսուցման ծրագրի վերաբերյալ:

Ելույթից հետո պարոն Մովսիսյանը դեսպան Ֆուկուշիմային և պարոն Վարդանյանին հրավիրեց կտրելու կարմիր ժապավենը՝ հայտարարելով կենտրոնի պաշտոնական բացումը: Այնուհետև դեսպան Ֆուկուշիման աշակերտներին հանձնեց ուսանողական քարտերը:



Ավանդական ընդունելության արարողություն աղով և հացով



Պարոն Մովսիսյանի բացման խոսքը



Պարոն Վարդանյանի ելույթը



Դեսպան Ֆուկուշիմայի շնորհավորական ուղերձը



Ուսանողական քարտերի հանձնումը



Ժապավենի կտրումը



Դասասեսյակ



Դրամաշնորհային աջակցության վահանակ